ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 1455-Ա « 18 » մարտի 2026 թ.

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 13-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ԱՃՈՒՐԴԻ ՀԱՂԹՈՂՆԵՐԻՆ ԳՈՒՅՔԵՐ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով քաղաքացիական օրենսգրքի 463-րդ, 464-րդ հոդվածները, Երևան քաղաքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 23-ի հ.463-Ն, Երևանի քաղաքապետի 2018 թվականի դեկտեմբերի 26-ի հ.3757-Ա և 2026 թվականի փետրվարի 20-ի հ.963-Ա որոշումները և գույքն աճուրդով վարձակալությամբ տրամադրելու մասին 2026 թվականի մարտի 13-ի արձանագրությունները.

1. 2026 թվականի մարտի 13-ին կայացած գույքի վարձակալության աճուրդում հաղթողներին վարձակալության իրավունքով տրամադրել գույք՝ համաձայն սույն որոշման հ.հ.1, 2 և 3 հավելվածների:

2.Լիազորել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետին՝ աճուրդով վարձակալության տրամադրվող գույքերի վճարման ենթակա գումարների վճարումները, սահմանված ժամկետում և կարգով կատարելուց հետո, աճուրդում հաղթողների հետ կնքել գույքի վարձակալության պայմանագրեր և գույքերի փոխանցման (հանձնման և ընդունման) ակտեր:

3. Ընդունել ի գիտություն, որ.

1) սույն որոշման 2-րդ կետով նշված պայմանագրերը ենթակա են նոտարական վավերացման, իսկ դրանցից ծագող իրավունքը՝ պետական գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի համապատասխան ստորաբաժանումում.

2) պետական գրանցման, միասնական տեղեկանքի և նոտարական վավերացման հետ կապված ծախսերը կատարվում են վարձակալների կողմից:

4. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետի վրա:

5. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Ա.Փամբուխչյանը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ